ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 սեպտեմբերի 2021 թվականի N 380-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 28-Ի N 57-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքի 33-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 02/11./32847-2021 հանձնարարականը՝

որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2003 թվականի հուլիսի 28-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի աշխատանքային կարգապահության ներքին կանոնները հաստատելու մասին» N 57-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները ՝

1) Որոշման մեջ և հավելվածում՝

ա) «Մարզպետարանի աշխատակազմ» բառերը փոխարինել «Մարզպետի աշխատակազմ» բառերով,

բ) «աշխատակազմի ղեկավար» բառերը փոխարինել «գլխավոր քարտուղար» բառերով:

2. Կարգապահական ներքին կանոնների 8-րդ կետը լրացնել նոր բովանդակությամբ հետևյալ կետերով.

«8.1 Գլխավոր քարտուղարը ստորաբաժանումների ղեկավարների կամ նշանակված պատասխանատու անձի միջոցով ապահովում է՝

ա) ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 17-Ն հրամանով սահմանված՝ աշխատանքի ներկայանալու պայման հանդիսացող փաստաթղթերի ստուգումը աշխատակիցների աշխատանքի ներկայանալիս,

բ) սանիտարահամաճարակային անվտանգության կանոններով սահմանված համապատասխան գրանցամատյանների վարումը, դիտարկումների իրականացումը:

8.2 Համապատասխան սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների խախտում հայտնաբերելու դեպքում առերևույթ խախտում թույլ տված

անձի վերաբերյալ տվյալները մեկօրյա (աշխատանքային) ժամկետում ներկայացվում են տվյալ անձին կարգապահական պատասխանատվության ենթարկելու (կարգապահական տույժ կիրառելու) իրավասություն ունեցող պաշտոնատար անձին կամ խախտում թույլ տված անձի անմիջական ղեկավարին (վերադասին), որն էլ պարտավոր է խախտման մասին մեկօրյա (աշխատանքային) ժամկետում տեղեկացնել կարգապահական պատասխանատվության ենթարկելու (կարգապահական տույժ կիրառելու) իրավասություն ունեցող անձին:

8.3 Մարզպետարանում հանրային պաշտոն զբաղեցնող, հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող, քաղաքացիական աշխատանք կատարող կամ տեխնիկական սպասարկում իրականացնող անձը պարտավոր է աշխատանքի ներկայանալիս նշանակված պատասխանատու անձին ներկայացնել առողջապահության նախարարության կողմից սահմանված՝ աշխատանքի ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերը:

Մինչև վերոնշյալ կետով նախատեսված պարտականության խախտումը վերացնելը յուրաքանչյուր աշխատանքային օր աշխատանքի ներկայանալը համարվում է որպես առանձին (ինքնուրույն) կարգապահական խախտում:

8.4 Ծառայողական քննության (կարգապահական վարույթի) ընթացքում քննարկվող խախտման մասին բացատրությունը (զեկուցագիր և այլն) ներկայացվում է գրավոր՝ մեկօրյա (աշխատանքային) ժամկետում»:

3. Հավելվածի 4-րդ կետի ե) ենթակետը լրացնել հետևյալ պարբերությամբ.

«Աշխատանքների արդյունավետությունը և բնականոն ընթացքն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված, կոնկրետ գործառույթների լիարժեք իրականացման նպատակով, Մարզպետի թույլտվությամբ առանձին աշխատողների համար աշխատատեղեր կարող են հատկացվել տարածաշրջանային կենտրոններում»:

4. Հավելվածի 6-րդ կետի 1-ին պարբերությունը լրացնել հետևյալ նախադասությամբ.

«Առանձին դեպքերում մարզպետի կամ գլխավոր քարտուղարի համաձայնությամբ կարող է սահմանվել աշխատանքային օրվա այլ ժամանակացույց՝ պահպանելով 8-ժամյա աշխատանքային ռեժիմը»:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

25.09.2021

X

ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN MELIKSET 4108600096

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Մ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2021թ. սեպտեմբերի 25
ք. Կապան